ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2

ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-25/109 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով տեխնիկական հսկողության ծառայությունների (/ՀՀ Արագածոտնի մարզի Փարպի համայնքի 5-րդ դարի Ծիրանավոր եկեղեցու ամրակայման, վերականգնման և տարածքի բարեկարգման և ՀՀ Արմավիրի մարզի Այգեշատ համայնքի Թարգմանչաց եկեղեցի) գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 03.10.2025թ. ժամը 12:00-ին էլեկտրոնային գնումների www.armeps.am կայքի միջոցով:

Գնահատող հանձնաժողովի կազմը՝

Հանձնաժողովի նախագահ՝	Հրանտ Հովսեփյան /գնահատող/
Հանձնաժողովի անդամներ՝	Արմինե Ստեփանյան /գնահատող/
	Սուրեն Շաքարյան /գնահատող/
	Աննա խաչատրյան /բացող/
	Վերգինե Սահակյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝	Լիանա Խառատյան

Բացակայում էր հանձնաժողովի անդամ Արմինե Ստեփանյանը

1. Տեղեկատվություն օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի հիմնավորումների մասին.

1.1 ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-25/109 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ հիմնավորումներ չեն ներկայացվել:

2. Տեղեկատվություն հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.

2.1 ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից էլեկտրոնային եղանակով կազմակերպված ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-25/109 ծածկագրով գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

Հ/Հ	Մասնակիցների անվանումները	Էլ. Հասցեները
1	«Ռիջիդ» ՍՊԸ	rigidalgroup@gmail.com

3. Տվյալներ հայտերի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին.

3.1 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը կազմվել և ներկայացվել են հրավերի պահանջներին համապատասխան:

4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.

4.1 Մասնակիցները ներկայացրել են հետևյալ գնային առաջարկները.

Հ/Հ	Նախահաշ-վային գինը, ՀՀ դրամ	Մասնակիցների անվանումները	
		«Ռիջիդ» ՍՊԸ	
		Առաջարկված գինը, ՀՀ դրամ	
		Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ
1	320000	198000	198000
2	436980	284000	284000

5. Գնահատման գործընթացի կասեցման մասին.

5.1 Մասնակիցների ներկայացրած փաստաթղթերի առկայության և դրանց սահմանված պայմաններին համապատասխանության գնահատման արդյունքների արձանագրման նպատակով կասեցնել նիստը և շարունակել այն հանձնաժողովի կողմից փաստաթղթերը հրավերով սահմանված ժամկետում ուսումնասիրելուց հետո, բայց ոչ ուշ, քան սույն ընթացակարգի հրավերի 8.2 կետով սահմանված ժամկետում, ՀՀ կրթության,գիտության,մշակույթի և սպորտի նախարարություն Վազգեն Սարգսյան 3,Կառավարական տուն 2, 3-րդ հարկ, 310 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 08.10.2025թ. ժամը 12:00-ին

6. Տվյալներ մասնակցի հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

6.1 «Ռիջիդ» ՍՊԸ-ի հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը, սակայն ներկայացված փաստաթղթերը թերի են՝ մասնավորապես ներկայացված նմանատիպ պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, սակայն ներկայացված չէ կնքված համաձայնագիրը՝ ֆինանսական միջոցներ նախատեսելու մասին, ինչը թույլ չի տալիս պայմանագիրը գնահատել որպես պատշաճ կատարված պայմանագիր:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

7. Գնահատման գործընթացի կասեցման մասին.

7.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ կասեցնել գնահատման գործընթացը և առաջարկել **«Ռիջիդ» ՍՊԸ-ին** մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել 6.1 կետով արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

7.2 Հանձնաժողովի նիստը շարունակել արձանագրված անհամապատասխանությունները մասնակցի կողմից սահմանված ժամկետում շտկելուց հետո՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն 2, 3-րդ հարկ, 310 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 13.10.2025թ. ժամը 11:00-ին

8. Գնման գործընթացի գնահատման ընթացքում արձանագրված անհամապատասխանությունների շտկման մասին.

8.1 **«Ռիջիդ» ՍՊԸ**-ն սահմանված ժամկետում շտկել է հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

9. Տվյալներ ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների վերաբերյալ.

9.1 Հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 34-րդ հոդվածը՝ բավարար գնահատված հատեր ներկայացրած մասնակիցներից ընտրված մասնակից ճանաչել «Ռիջիդ» ՍՊԸ-ին՝ 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

10. Գնահատման արդյունքների մասին.

10.1 Հրապարակել պայմանագիր կնքելու որոշման հայտարարության տեքստը և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն առանց անգործության ժամկետ սահմանելու ընտրված մասնակցին էլեկտրոնային ձևով գնումների կազմակերպման կարգին համապատասխան՝ ARMEPS համակարգով, ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

Գնահատող հանձնաժողով՝

_____ Հրանտ Հովսեփյան /նախագահ/

_____ Սուրեն Շաքարյան

_____ Աննա Խաչատրյան

_____ Վերգինե Սահակյան

_____ Լիանա Խառատյան /քարտուղար/